Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-604-29.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «քրեակատարողական հիմնարկի պետ» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետ,» բառերը,

բ. «բ» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ,» բառերը,

2) 1-ին մասի 3-րդ կետի ՝

ա. «ա» ենթակետում «քրեակատարողական ծառայության գլխավոր մասնագետ,» բառերից հետո լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետ,» բառերը,

բ. «բ» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի պետ,» բառերը, իսկ «քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ» բառերից հետո լրացնել «,քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի ավագ օպերլիազոր» բառերը,

3) 1-ին մասի՝

ա. 4-րդ կետի «ա» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ՝» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի օպերլիազոր,» բառերը,

«քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ» բառերից հետո լրացնել «,քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ» բառերով:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում՝ Արդարադատության նախարարը՝ անհրաժեշտ փոփոխություններ է կատարում քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և քրեակատարողական հիմնարկների կառուցվածքում և հաստիքացուցակում:

~~Առաջին~~Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-604-29.05.2023-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի ~~(այսուհետ նաև՝ Օրենք)~~ 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «քրեակատարողական հիմնարկի պետ» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետ~~,~~» բառերը,

բ. «բ» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ~~,~~» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ~~»~~» բառերը,

2) 1-ին մասի 3-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «քրեակատարողական ծառայության գլխավոր մասնագետ~~»~~» բառերից հետո լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետ~~»~~» բառերը,

բ. «բ» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի պետ»,» բառերը, իսկ «քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ» բառերից հետո լրացնել «,քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի ավագ օպերլիազոր՝»» բառերը,

3) 1-ին մասի՝

ա. 4-րդ կետի «ա» ենթակետում՝ «քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ՝» բառերից առաջ լրացնել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի օպերլիազոր,» բառերով բառերը, «քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ» բառերից հետո լրացնել «,քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ՝» բառերով:

Հոդված 2. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում՝ Արդարադատության նախարարը՝ անհրաժեշտ փոփոխություններ է կատարում քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի եւ քրեակատարողական հիմնարկների կառուցվածքում եւ հաստիքացուցակում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-604-29.05.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	««Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «(այսուհետ նաեւ՝ Օրենք)» ձեւակերպումը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագիծ**	Նախագծով նախատեսված լրացումներն առաջարկում ենք վերանայել կետադրական նշանների տեսանկյունից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: